## Լուսաբանում




### «ԿՈՌՈՒՊՑԻԱ. SHIFT+DELETE»

2023 թվականի ապրիլի 16-ին՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողները, մենթոր Ռ.Պետրոսյանի և կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կ.Ղարագյոզյանի գլխավորությամբ մասնակցեցին «Կոռուպցիա. Shift+Delete» ծրագրի շրջանակներում իրականացրած բանավեճերի մրցաշարին: Թեման բավականին հետաքրքիր էր և ուսուցողական.«Կոռուպցիան կրթական հաստատությունում հնարավոր չէ արմատախիլ անել»: Ուսումնարանի գիտակ և տրամաբանող սովորողները լավագույնս հանդես գալով «ԴԵՄ» թիմում՝ հաղթանակեցին և վաստակելով 52,5 միավոր՝ հնարավորություն ստացան անցնել 2-րդ փուլ:



## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ




ARMENIA INTEGRITY PROJECT










## ԿԱՐԻԵՐԱՅԻ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

2023 թվականի ապրիլի 18-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացվեց «Հուզական ինտելեկտ» թեմայով դասընթացը՝ «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի երիտասարդական աշխատողներ Սոնա Հակոբյանի և Արտաշես Հարությունյանի նախաձեռնությամբ։ Դասընթացը մեկնարկեց երիտասարդական կենտրոնի կողմից տրամադրվող ծառայությունների մասին հակիրճ տեղեկատվության ներկայացումամբ։ Նպատակամիտված սեմինար-պարապմունքի ժամանակ դասընթացավարների կողմից իրականացվեցին հույզերի ճանաչման, մոտիվացիայի վերհանման և հաղորդակցման հմտությունների բացահայտման վերաբերյալ հետաքրքիր խաղեր։ Սովորողների հետաքրքրվածությունն ու ակտիվ մասնակցությունն ապահովված էր։ Վերջնարդյունքում՝ մասնագիտության մեջ հստակ կողմնորոշված երիտասարդները բացահայտեցին, որ շնորհիվ «հուզական ինտելեկտ» ունակության իրենք կկարողանան ճանաչել այլոց և սեփական հույզերը, մտադրությունները, մոտիվացաները, ցանկությունները և դրանք կկառավարեն հստակ խնդիրների լուծման նպատակով։



## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ














# ՄԱՔՐԱՊԱՏՈՒՄ

2023 թվականի ապրիլի 19-ին ուսումնարանի բակում և մասնաշենքում, օրինակելի նախաձեռնության շրջանակում, իրականացվեցին շրջակա միջավայրի մաքրման աշխատանքներ՝ ապահովելով ուսանողների և վարպետ-դասախոսների ակտիվ մասնակցությունը։ Յուրաքանչյուրը ուսանող գիտակցում էր, որ մաքուր պահելով ուսումնական հաստատության տարածքը, քաղաքը, կատարում է իր ամենակարևոր պարտավորություններից մեկը և նպաստում է միջավայրի գեղեցկության պահպանմանը։ Հայրենիքի հանդեպ սիրո և հոգածության դրսևորումը սկսվում է այն մաքուր պահելուց, ուստի մաքուր պահենք բնությունը և շրջակա միջավայրը։



## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Ծրագիր

Հայերեն | Français | English



ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Մեր Մասին · Կրթություն · Դիմորդ · Ուս. խորհուրդ · Նորություններ · Իրավական ակտեր · Ծրագրեր · Կապ

«Գյումրու թիվ 4 արհեստագործականպետականուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է բնագիտամաթեմատիկական մ/մ թիվ 2 նիստում

30 08 2022 թ.

Մեթոդմիավորման նախագահ՝ Ռ. Պետրոսյան

### Բաց դաս

**Առարկա՝** մաթեմատիկա

**Թեմա՝** «Համամասնությունը թվերի աշխարհում»

**Կուրս՝** I, II, III

**Անցկացման ամսաթիվ՝** 21.04 2023 թ.

**Նպատակ.**

1. Ճանաչել և գնահատել մաթեմատիկայի դերը մարդու կյանքում
2. Ընդլայնել սովորողների իմացության մտահորիզոնը
3. Ծանոթացնել թվերի առէջման պատմությանը, հաշվարկման գրավոր և բանավոր առավել արդյունավետ մեթոդների
4. Ստեղծել միջառարկայական կապ/փարտահարցում մասնագիտության հետ/

**Վերջնարդյունք**

Ուսանողը կարողանա ռացիոնալ և հնարամիտ եղանակներով կատարել միջին բարդության հաշվարկներ/բանավոր և գրավոր/:

**Նախապատրաստական փուլ՝**

- ✓ Նախապես հանձնարարել լրացուցիչ աղբյուրներից հավաքել անհրաժեշտ տեղեկություններ,
- ✓ պատրաստել թեմայի համապատասխան սահմանգիր, լուսաբանող նյութեր, տեսանյութեր, սահիկաշար և այլն:

**Ընթացքը.**

***Մասնակիցները ներկայացնում են.***

1. Հռոմեական թվագրության առէջման պատմությունը/հակիրճ/
2. Հաշվարկ մտքում
   - հաշվարկի ռեկորդակիրները/սահիկաշար/
3. Հանրահաշվի լեզուն/3 խնդիրների լուծում/
   - **Մանիրներ** «Մի բժշկի մասին»-դերախաղ, «Վարպետություն», «Դիոֆանտի տարիքը»
4. Ի դեպ
   - «Արագ հաշվարկի խորամանկ մեթոդներ»: 6,7,8,9,10-ի բազմապատկումը հնարամիտ եղանակով/նվազագույնը՝ 5 օրինակ/:

**Անհրաժեշտ պարագաներ՝** համակարգիչ, լուսածիր, ֆլիպչարտ, կպչուն թղթեր, գունավոր մատիտներ,




# «ՀՆԱՐԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԵՐԻ ԶԱՐՄԱՆԱՀՐԱՇ ԱՇԽԱՐՀՈՒՄ»

2023 թվականի ապրիլի 21-ին կրթօջախում անցկացվեց «Հնարամտությունը թվերի զարմանահրաշ աշխարհում» թեմայով բաց դասը: Նպատակ ունենալով տարբեր հնարների և մեթոդների կիրառմամբ բարձրացնել ուսանողների մաթեմատիկայի իմացության մակարդակը և զարգացնել հաշվողական հմտությունները՝ դասախոս Ժ.Բարսեղյանը կազմակերպեց բաց դաս, որը հետաքրքիր էր և իր կառուցվածքով տարբերվող:

Հատկանշական էր այն փաստը, որ դասավանդողի կողմից կիրառվել էին միջառարկայական կապեր, հնարավորություն էր ընձեռվել հարստացնել սովորողների ակտիվ բառապաշարը՝ նպաստելով մաթեմատիկական լեզվով մտքերն արտահայտելուն և գիտելիքները հմտորեն կիրառելուն:

Իրենց վերլուծական կարողություններով աչքի ընկան այն ուսանողները, ովքեր կարողացան տարբերելով հայտնին անհայտից, վերականգնեցին նրանց միջև եղած կապերն ու հարաբերությունները և լուծեցին հետաքրքիր խնդիրներ:

Բնական գիտություններում հնարամիտ մեթոդների կիրառման անհերքելի արդյունավետությունը սովորողներին «դրդեց» մտածել, որ մաթեմատիկան, այսպես ասած, ներկառուցված է տիեզերքի մեջ և նրա իդեալական հիմքն է:



## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Լուսաբանում




# ՈՐՔԱՆ ԴԺՎԱՐ Է ՀԱՂԹԱՆԱԿԸ, ԱՅՆՔԱՆ ՄԵԾ Է ՀԱՂԹԵԼՈՒ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2023 թվականի ապրիլի 23-ին Իսրայելում անցկացվեց պատանիների սամբոյի Եվրոպայի առաջնությունը, որին իր մարզական բացառիկ կարողություններով հանդես եկավ «Գեղանկարչություն և քանդակագործություն՝ փորագրող փայտյա գեղարվեստական իրերի» երրորդ կուրսի ուսանող Համլետ Պարսամյանը:

Հաջողված մրցելույթներից հետո /0-2 հաշվով/ նա հռչակվեց պատանիների Եվրոպայի առաջնության փոխչեմպիոն:

Համլետ Պարսամյանը հայ մարզիկին բնորոշ հայկականության ավանդների տարածողն է աշխարհի սպորտային մեծ բեմերում:

Ուսումնարանի ուսանողական և մանկավարժական ողջ հանրույթը սրտանց շնորհավորում է Համլետ Պարսամյանին հաջող մրցելույթների համար ու մաղթում նրան նորանոր բարձունքներ և սպորտային բնագավառում փառքի դափնիներ:






## ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐՈՒՄ



Հայաստանի Խոհարարների Ասոցիացիան շնորհակալություն է հայտնում Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանին՝ ապրիլի 28-ին կայացած Հայաստանի Երիտասարդ Խոհարարների մրցույթի նախնական փուլին արժանապատիվ մասնակցության համար: Խոհարարի որակավորում շնորհված կրթօջախի շրջանավարտ Ահարոն Մելիքյանը մրցույթին աչքի է ընկել իր փայլուն գործնական աշխատանքով, խոհարարական հմտություններով և հաղորդակցման բացառիկ որակներով: Նախնական փուլին գրանցած գերազանց արդյունքները երաշխիք հանդիսացան **Հայաստանի ամենամեծ Երիտասարդ Խոհարարների մրցույթին** արժանավոյնս հանդես գալու:

Ընտրած մասնագիտության նվիրական կոչմանը հավատարիմ մնալը երիտասարդ խոհարարի ձշմարտացիության ակներև ապացույցն է, իսկ աշխատասիրությունը, սկզբունքայնությունն ու սերը նրա հմտությունների դրսևորման խթանիչներն էին:

Հայաստանի ամենամեծ Երիտասարդ Խոհարարների մրցույթը տեղի կունենա հունիսի 2, 3, 4-ին՝ Yerewine Days փառատոնի շրջանակներում:

## Ծրագիր



ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկվել է հումանիտար մեթոդմիավորման
«30» 08 2022թ.-ի թիվ 2 նիստում
Նախագահ՝ Բ. Գրիգորյան

ԾՐԱԳԻՐ
Գրական դաս- դաստիարակություն
Հայրենասիրության ուսուցումը Րաֆֆու «Սամվել» պատմավեպի համանուն
կերպարի միջոցով խորացված բաց դասի

Առարկա՝ հայ գրականություն
*Դասավանդող*՝ Գ. Ավետիսյան
Թեման՝ Րաֆֆու «Սամվել» պատմավեպը
Անցկացման ժամկետը՝ 28.04.___ 2023թ.
*Նպատակը*՝
- ներկայացնել չորրորդ դարի պատմական իրադարձությունները
- ճանաչել և արժևորել Սամվելի հերոսական կերպարի թողած ազդեցությունը հետագա սերունդների վրա
- Հայրենասիրության քարոզումը Սամվելի գեղարվեստական կերպարի միջոցով

*Դասի կահավորումը*՝
համակարգիչ, պրոեկտոր, գրքեր, Աստվածաշունչ

Նախապատրաստական փուլ՝
- հանձնարարել սովորողներին ուսումնասիրել Փավստոս Բուզանդի, Րաֆֆու և այլոց ստեղծագործությունները, զուգահեռներ անցկացնել պատմական փաստի և գեղարվեստական ստեղծագործության միջև
- ստեղծել թեմատիկ սահիկաշար

*Ընթացքը*
- բացման խոսք
- գրական դաս-դաստիարակության միջոցով վեր հանել 4-րդ դարի պատմական իրադարձությունները

Ակնկալվող արդյունք
- Սամվելի կերպարի թողած հայրենասիրական դասերը գնահատող և արժևորող սովորողներ
- հայրենասիրական գաղափարով ոգեշնչված սերունդ
- կերպարի թողած ազդեցությունը հետագա սերունդների վրա

## Լուսաբանում




# ԴԱՍ-ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում 2023թվականի ապրիլի 28-ին տեղի ունեցավ բաց դաս՝ «Հայրենասիրության ուսուցումը Րաֆֆու «Սամվել» պատմավեպի համանուն կերպարի միջոցով» խորագրով, որի պատասխանատուն էր հայոց լեզվի և գրականության դասախոս Գ.Ավետիսյանը:
Օրվա խորհուրդն էր դաս- դատավարության միջոցով ներկայացնել չորրորդ դարի պատմական իրադարձությունները Րաֆֆու «Սամվել» պատմավեպի համանուն կերպարի վերլուծությամբ:
Բաց դասի նպատակն էր ճանաչել և արժևորել Սամվելի հերոսական կերպարի թողած ազդեցությունը հետագա սերունդների վրա, ինչպես նաև հայրենասիրության քարոզումը Սամվելի պատմագեղարվեստական կերպարի միջոցով:
Ուսանողների խոսքը համեմված էր IV դարի պատմիչ Փավստոս Բուզանդի պատգամներով, «Սամվել» պատմավեպից ծաղկաքաղ արված առանձին հատվածների դատավարության ներկայացումով: Ուսանողները թեմատիկ սահիկաշարի միջոցով ներկայացրին Սամվելի հերոսական կերպարը, զուգահեռներ անցկացրին պատմական փաստի և գեղարվեստական ստեղծագործության միջև: Բաց դասի մասնակիցներն իրենց խոսքում կարևորեցին Սամվելի կերպարի թողած ազդեցությունը հայրենասիրական գաղափարով ոգեշնչված սերունդների վրա:
Դասի ավարտին մանկավարժներն ու ուսանողներըքննարկման միջոցովմեկ անգամ փաստեցին այն համոզմունքը, որ հայրենիքի սերը բացարձակ է, գերակա արժեք, իսկ մյուս բոլոր զգացմունքները՝ մասնավոր: Այսօր,առավել քան երբևէ, մեր հայրենիքը կարիքն ունի հայրենասեր զավակների, որոնց համար հայրենիքը սուրբ է: Սամվելի հերոսական կերպարը դարերի խորքից պատգամում է մեզ, որ մեր հայրենիքի հզորացման ու շենացմանսրբազան պատասխանատվությամբպետք է բազմապատկենք մեր ջանքերը՝ հանուն մեր ժողովրդի ապագայի, հանուն մեր իղձերի, հանուն մեր նահատակ զավակների:

Պատասխանատու՝ Գ. Ավետիսյան

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ














# ՙՙՄԻԱՍԻՆՙՙ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ /MIASSINE/ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՎԱՐՊԵՏԱՑ ԴԱՍ

2023 թվականի մայիսի 2-ին «Խոհարարական գործ» մասնագիտության ուսանողները մասնակցեցին ՙՙՄիասինՙՙ հիմնադրամի կողմից/Miassine/ կազմակերպված, «Ունի» ցուցահանդեսի շրջանակներում «Աշկերտների տան»-ը անցկացված, վարպետաց դասին:

Նորարարական հրուշակագործության հմուտ վարպետ, նկարչուհի Սաթենիկ Գևորգյանի կողմից անցկացված հմտությունների ցուցադրությունը ծառայեց իր նպատակին: Մեր ուսանողներն իրենց խոհարարական կարողությունները լավագույնս դրսևորելով՝ անմիջական մասնակցություն ունեցան թխվածքաբլիթների թխման գործընթացին: 3D թխվածքաբլիթներ պատրաստող կրեատիվ մասնագետի հետ սովորողները կատարեցին անուշեղենի ձևավորման ինքնատիպ աշխատանքներ:



## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ














# ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԻԼՄԻ ԴԻՏՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

2023 թվականի մայիսի 8-ին՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացվեց մասնագիտական ֆիլմաշարի դիտում-քննարկում «Նախապատրաստուկների ստացում գլոցում և լարաձգման եղանակով», «Մանրակների պատրաստում հյուսվածքային տեխնիկայի եղանակով», «Ոսկերչական քարերի տեղադրում» խորագրով ՝ «Ոսկերչություն՝ ոսկերիչ» մասնագիտության առաջին , երկրորդ և երրորդ կուրսերի մասնակցությամբ:
Ֆիլմի դիտման նպատակն էր հարստացնել և ամրապնդել ուսանողների մոտ մասնագիտական ստացած գիտելիքները և զարգացնել նոր հմտություններ:
Սովորողները, ֆիլմի դիտմանը զուգահեռ, մեկնաբանեցին տեսանյութերը:
Ֆիլմի դիտման ավարտին տեղի ունեցավ քննարկումներ ուսանողները ,քննարկեցին զուգահեռներ անցկացրեցին իրենց կատարած աշխատանքների և ֆիլմից ստացած գիտելիքների վերաբերյալ:

**Դասավանդողներ՝** **Ա. Մարտիրոսյան**

**Ա.Բաղդասարյան**

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ














# ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑ ԳՅՈՒՄՐՈՒ ԱՄԵՆԱՀԻՆ ԵՎ ԿՈԼՈՐԻՏԱՅԻՆ «ԼՅՈՒՔՍ» ՎԱՐՍԱՎԻՐԱՆՈՑ

Մայիսի 11-ին, Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «վարսահարդար» մասնագիտության առաջին կուրսեցիները կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կ.Ղարագյոզյանի նախաձեռնությամբ այցելեցին «**Լյուքս**» վարսավիրանոց: Վարպետ-մասնագետների կողմից ներկայացվեց տասնամյակների պատմություն ունեցող Գյումրվա ամենահին վարսավիրանոցի ստեղծման պատմությունը, փորձաշատ վարսավիրների աշխատանքային գործունեության մասին հետաքրքիր փաստեր և հիշարժան դիպվածներ: Այցելեցությունը ծառայեց իր նպատակին:



## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ









## Ծրագիր

Հայերեն | Français | English



ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է մ/մ թիվ նիստում
__4__ ____20.02____ 202_ թ.
Մ/Մ նախագահ՝ Ա. Ղանդիլյան

### Բաց դասի պլան

**Մասնագիտություն՝** «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում-ռադիոմեխանիկ՝ ռադիոհեռուստատեսային սարքավորումների նորոգման և սպասարկման»
**Կուրս՝** I
**Դասավանդող՝** Հ. Մարմարյան
**Անցկացման ամսաթիվը՝** 16.05.2023թ.
**Դասի թեման՝** «Ռադիոէլեկտրոնիկան և աշխարհը»

**Նպատակ՝**

- Հարստացնել մասնագիտական գիտելիքներ
- Հաղորդել թեմայի վերաբերյալ նոր տեղեկատվություն
- Ձեռք բերել փորձարարական հմտություններ
- Ցուցադրել մասնագիտական կարողություններ
- Խթանել հետաքրքրություն և արժևորել ընտրած մասնագիտությունը
- Ստեղծել միջառարկայական կապ/Աշխարհագրություն, ֆիզիկա/

**Նախապատրաստական փուլ՝**

Ուսանողներին հանձնարարել որոնել թեմային տեղեկատվություն, մշակել և ներկայացնել /տեսանյութերի կամ սահիկաշարի միջոցով/
Բաց դասի փորձերի համար նախապատրաստել համապատասխան նյութեր և պարագաներ

**Ընթացք՝**

**Ցուցադրել ստորև նշված թեմաներով փորձերը**

ա/ Անլար եղանակով հոսանքի ստացում, փոխանցում(լաբորատոր հաղորդալարի միջոցով փաթույթի ստացում, տպասալի ստացում)
բ/ Գեներատոր Պետլյա( դրական և բացասական բևեռներին հաստատուն լարման փոխանցման գործընթացի իրականացում, համապատասխան ջերմաստիճանների ստացում և հակառակ գործընթացի իրականացում)
գ/Մագնիսական սկավառակի հավասարակշռությամբ ուղղահայաց դիրքի ստացում(միկրոշարժիչի օգնությամբ օդի հոսքի ստացում)

Փորձերին զուգահեռ ցուցադրվում են սահիկաշարեր և թեմատիկ տեսանյութեր:
Ուսանողները միաժամանակ մեկնաբանում են ցուցադրված երևույթները և ներկայացնում կիրառված սարքավորումների վերաբերյալ անհրաժեշտ հավելյալ տեղեկատվություն:

**Վերջնարդյունք**

Մասնագիտական լրացուցիչ գիտելիքներով հարստացած, հետազոտական աշխատանքներ կատարելու և մասնագիտական կարողություններով օժտված ուսանողներ:

**Մասնագիտական մեթոդմիավորում**




# ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԸ...

2023թվականի մայիսի 16-ին «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտության առաջին կուրսեցիների մասնակցությամբ անցկացված մասնագիտական բաց դասը հետաքրքիր էր: Օգնել ուսանողներին ապագայի առանձնահատկությունների և ամենաառաջատար ռադիոսարքավորումների ֆունկցիոնալ դերի ու նշանա-կության մասին տեղեկացվածության մեջ արտադրական ուսուցման վարպետ Հ.Մարմարյանի համար հանդիսացել էր նպատակ: Բաց դասի ընթացքում ուսանողների կողմից ներկայացվեցին և մանրակրկիտ մեկնաբանվեցին ժամանակակից գիտական նվաճումներին և վերաբերող տեսանյութեր: Ներկայացված թեմատիկ տեղեկատվությունը և տարաբնույթ փորձերի ցուցադրումը առավել հետաքրքիր դարձրին բաց դասը: Կենցաղում, առօրյայում և տարբեր ոլորտներում գերժամանակակից ռադիոսարքավորումների կիրառման հնարավորությունների մասին մասնագիտական զրույց-քննարկումն ապահովեց դասի բովանդակալից ամփոփումը:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











Լուսաբանում



ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

## ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ «ԿԱՐԻԵՐԱՅԻ ԼԱԲ» (@CAREERLAB.ARM) ՀԿ-Ի ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

📍 2023թ. մայիսի 22-ին և 23-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Մասնավոր հատվածի զարգացում և ՄԿՈՒ» ծրագրի շրջանակում, «Կարիերայի Լաբ»(@careerlab.arm) ՀԿ-ի համագործակցությամբ, իրականացվեց մասնագիտական կողմնորոշման դասընթաց Շիրակի մարզի դպրոցների 37 աշակերտների համար:

✅ Դասընթացի նպատակն էր նպաստել դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը՝ սեփական հետաքրքրություններին ու պահանջմունքներին համապատասխան:

Դպրոցականները հնարավորություն ունեցան ուսումնական հաստատությունում տեսականորեն և գործնականում ծանոթանալ տարբեր մասնագիտությունների առանձնահատկություններին:

Ծրագրի երկրորդ օրը կազմակերպվեց ուսումնաճանաչողական այց «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամ և «Royal Furniture Gyumri» կահույքագործության արտադրամաս, որտեղ աշակերտները հանգամանորեն ուսումնասիրեցին «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» և «Կահույքի արտադրության տեխնոլոգիա՝ կահույքագործ» մասնագիտություններին բնորոշ գործնական աշխատանքային գործընթացները: Դպրոցականները ձեռք բերեցին նաև գործատուների կողմից առաջարկվող ոլորտային կրթական և աշխատանքային պահանջարկի ու հնարավորությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Լուսաբանում




### ՄԱՅԻՍԻ 24.

### ՂՈՂԱՆՋ ԱՎԱՐՏԻ…

Կրթօջախում կրկին տոնական տրամադրություն էր. ազդարարեցին վերջին զանգի ղողանջները: Գարնանային բացառիկ այդ օրը տարբերվում էր նախորդներից իր հիշարժանությամբ, խոնարհումի, հարգանքի և ապրեցնող նվիրումի կերտվածքով: Լացող ու ժպտացող աչքեր, հուզառատ և ինքնաբուխ խոսքեր, անզուգական երգ ու պար, աննկեղծության, նվիրումի ջերմ ու հիշարժան պահեր: Խոստովանանքին միախառնվել էին ոչ միայն շնորհակալանքի, այլև՝ ափսոսանքի գույները:

Միջոցառման ավարտն առավել ինքնատիպ էր, երբ կրթօջախի տնօրեն տիկին Ահարոնյանի կողմից խրախուսվեցին և պատվոգրեր հանձնվեցին հասարակական ակտիվի մեջ իրենց լավագույնս դրսևորած, սպորտային հաջողություններ գրանցած և մասնագիտական ստեղծագործ հմտություններով օժտված շնորհալի ուսանողները: Տնօրինության կողմից շնորհակալագրեր հանձնվեցին նաև Արցախյան 44-օրյա պատերազմի այն մասնակից շրջանավարտներին, ովքեր հավատարիմ են մնացել հայի բարոյապաշտ, հայրենասեր և անվախ տեսակին:

Եվս մեկ տարի գրանցվեց կրթօջախի պատմության հիշարժան էջերում:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ













## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











Լուսաբանում




**2023 թվականի հունիսի 1-ից Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում՝ համաձայն կարգի, ընթանում են 2022-2023 ուստարվա Պետական ավարտական քննությունները**

Հունիսի 1-հայոց լեզու և հայ գրականություն
հունիսի 5-մաթեմատիկա
հունիսի 8-պատմություն
Ավարտական պետական քննություններն ընթանում են ստորև նշված մասնագիտությամբ կուրսերի համար.
«Ոսկերչություն»

- «Խոհարարական գործ»
- «Վարսավիրական արվեստ և դիմահարդարում »
- «Համակարգիչների շահագործում»
- «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում»
- «Գեղանկարչություն և քանդակագործություն՝ փորագրող փայտյա գեղարվեստական իրերի»

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











Լուսաբանում




## ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2023 թվականի հունիսի 9-ին անցկացվեց դուալ ուսուցմամբ «Խոհարարական գործ» մասնագիտության պետական ավարտական որակավորման քննությունը, որին մասնակցեց 11 ուսանող և պետական որակավորող հանձնաժողովի որոշմամբ վերջիններիս շնորհվեց խոհարարի որակավորում:

2023 թվականի հունիսի 12-ին՝ կրթօջախի ժամանակակից տեխնիկասարքավորումներով հագեցած համակարգչային լսարանում անցկացվեց «Համակարգիչների շահագործում» մասնագիտության պետական ավարտական որակավորման քննությունը, որին մասնակցեց 11 ուսանող: Պետական որակավորող հանձնաժողովի որոշմամբ վերջիններիս շնորհվեց «Օպերատոր համակարգչի» որակավորում:

2023 թվականի հունիսի 13-ին կրթօջախի վարսահարդարման ուսումնական արհեստանոցում անցկացվեց «Վարսավիրական արվեստ և դիմահարդարում» մասնագիտության պետական ավարտական որակավորման քննությունը, որին մասնակցեց 6 ուսանող: Պետական որակավորող հանձնաժողովի որոշմամբ՝ վերջիններիս շնորհվեց «Վարսահարդարի» որակավորում:

2023 թվականի հունիսի 14-ին՝ կրթօջախի գերժամանակակից մեքենասարքավորումներով, գործիքներով և անհրաժեշտ պարագաներով համալրված ուսումնական արհեստանոցում անցկացվեց «Գեղանկարչություն և քանդակագործություն» մասնագիտության պետական ավարտական որակավորման քննությունը, որին մասնակցեց 8 ուսանող: Պետական որակավորող հանձնաժողովի որոշմամբ վերջիններիս շնորհվեց «Փորագրող՝ փայտյա գեղարվեստական իրերի» որակավորում:

2023 թվականի հունիսի 15-ին, կրթօջախի ոսկերչական ուսումնական արհեստանոցում, անցկացվեց «Ոսկերչություն» մասնագիտության պետական ավարտական որակավորման քննությունը, որին մասնակցեց 16 ուսանող: Պետական որակավորող հանձնաժողովի որոշմամբ վերջիններիս շնորհվեց «Ոսկերիչ» որակավորում:

2023 թվականի հունիսի 16-ին անցկացվեց «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտության պետական ավարտական որակավորման քննությունը, որին մասնակցեց 11 ուսանող և պետական որակավորող հանձնաժողովի որոշմամբ վերջիններիս շնորհվեց ռադիոհեռուստատեսային սարքավորումներ սպասարկող և նորոգող ռադիոմեխանիկի որակավորում:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

















## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Լուսաբանում




Հունիսի 20-ին կրթօջախի 62 շրջանավարտների հանձնվեցին պետական նմուշի ավարտական փաստաթղթեր՝ եռալեզու դիպլոմներ:

Հիմնարար գիտելիքներով սպառազինված, մասնագիտական կարողություններով և հմտություններով օժտված երիտասարդ մասնագետները հետայսու պատրաստ են բավարարել աշխատաշուկայի պահանջները՝ դիմակայելով նորանոր մարտահրավերների:







## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ









